ք.Վանաձոր 15.04.2026թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

«Օկտոպուս Գրուպ» ՍՊԸ-ի կողմից Վանաձոր համայնքի Վարդանանց 16 հասցեում ավտոհավաքակայանի վերակառուցում գրասենյակային տարածքների նախագծի վերաբերյալ հանրային լսումների

Բացման խոսքով հանդես եկավ Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետի պարտականություններ կատարող Արմեն Ալավերդյանը՝ ներկայացնելով հանրային քննարկումների նպատակը: Նա նշեց, որ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /03.05.2023թ. ՀՕ-150-Ն/ և ՀՀ կառավարության 28.12.2023թ. «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» N 2343-Ն որոշման համաձայն՝ 2026 թվականի ապրիլի 15-ին, ժամը 14:30-ին Վանաձորի համայնքապետարանի վարչական շենքում (ՀՀ Լոռու մարզ, ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22) տեղի են ունենում «Օկտոպուս Գրուպ» ՍՊԸ-ի կողմից Վանաձոր համայնքի Վարդանանց 16 հասցեում ավտոհավաքակայանի վերակառուցում գրասենյակային տարածքների նախագծի վերաբերյալ հանրային լսումներ:

Վանաձորի համայնքապետարանի պաշտոնական ինտերնետային կայք էջում տեղադրվել է հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների հրավերը https://vanadzor.am/content/3790, ինչպես նաև այն փակցվել է Վանաձորի համայնքապետարանի վարչական շենքում՝ բոլորի համար տեսանելի և մատչելի վայրում: Այնուհետև խոսքը փոխանցեց նախագծի ճարտարապետ Արտակ Գաբրիելյանին, ով ներկայացրեց Վանաձոր համայնքի Վարդանանց 16 հասցեում ավտոհավաքակայանի վերակառուցում գրասենյակային տարածքի էսքիզային նախագիծը, որի մշակման համար հիմք են հանդիսացել անշարժ գույքի պետական գրանցման N 25022025-06-0026 վկայականը և կառուցապատողի առաջադրանքը:

Հողամասի բնութագիրը

Կադաստրային ծածկագիրը 06-001-0281-0025
Հողամասի չափը՝ 0.11944 հա
Հողամասը ներկայումս կառուցապատված է, գոյություն ունի ավտոհավաքակայանի մասնաշենք 187,97 քմ, գրասենյակ 1142,72 քմ, պահակի սենյակ 1,6 քմ, պարիսպ 7,04 քմ:
Նախատեսվում է պահակի սենյակը և հողի արևելյան հատվածում գտնվող պարիսպը (1.1 գծամետր) քանդել: Մասնակի քանդվում է նաև արևմտյան հատվածի պարիսպի մի մասը:

Նախատեսվում է գոյություն ունեցող շինությունները վերակառուցել:
Վերակառուցման արդյունքում ստանում ենք 3 վերգետնյա հարկերով կառույց, որը օգտագործվելու է որպես գրասենյակ:
Նախատեսվող շինության հիմնական բնորոշիչները՝

- Մոնոլիտ կարկասային կառույց, պատերը ցեմենտ-ավազ բլոկի շարվածք:
- Տանիքը գրասենյակի տարածքում մասնաշենքում երկափեք է, իսկ վերակառուցվող ավտոհավաքակայանի հատվածում բազմաթեք է, կազմակերպված ջրահեռացմամբ:
- Կառուցապատման մակերեսը կազմում է 898 քմ:
- Արտաքին կառուցապատումը բոլոր հարկերը միասին՝ 2630 մ^2, առավելագույն բարձրությունը +0,00 նիշից՝ 13,2մ:

Հարց ու պատասխան

Ա.Ալավերդյանը հարց հնչեցրեց, արդյոք նախատեսվող շինությունը համապատասխանում է հաշմանդամություն ունեցող անձանց, ապահովված է մատչելիություն, թե՝ ոչ:

Ա. Գաբրիելյան- Ի պատասխան հարցին նշեց,որ նախատեսվում է ունենալ 3 մուտք, որինցից մեկը Վարդանանց փողոցից է լինելու, մյուսը՝ հակահրդեհային, և բոլոր մուտքերը ապահովված են լինելու թեքահարթակներով՝ նորմերին համապատասխան, հարմարեցված են լինելու նաև սանհանգույցները՝ համապատասխան կահավորումներով:

Ա. Ալավերդյանը մանրամասն ներկայացրեց ընթացակարգը.

Այս հանրային լսման համար հաստատել ենք մեզ տրամադրած նախնական էսքիզային նախագիծը,հաջորդ քայլը նախնական ճարտարապետահատակագծային առաջադրանքը Ձեզ կտրամադրելն է, որից հետո կդիմեք ՇՄԱԳ փորձաքննությանը, որպեսզի մյուս հանրային լսումը իրականացնեն իրենք և նախագիծը անցնի համալիր պետական փորձաքննություն:

Ա.Գաբրիելյան - ՇՄԱԳ փորձաքննության ներկայացնելու համար կառուցապատման մակերեսը չի համապատասխանում պահանջվող նորմերին, փոքր է 1500 քառ մետրից:

Ա.Ալավերդյանը նշեց, որ դիտարկեն ընդհանուր մակերեսը, որը մոտավորապես կազմում է 2700 քառ մետր:

Ա. Ալավերդյան - Քանի որ 4-րդ կատեգորիայի շինություն է, որը ըստ կարգի անպայման պետք է անցնի և ՇՄԱԳ, և համալիր փորձաքննություններ, ուստի առաջարկում եմ գրավոր մանրամասն ներկայացնել՝ հղում անելով օրենքի կետին: Մեր կողմից կուսումնասիրվի և օրենքին համապատասխան կիրականացվեն պահանջվող աշխատանքները:

Ամփոփում

Հանրային լսմանը ներկայացվեց «Օկտոպուս Գրուպ» ՍՊԸ-ի կողմից Վանաձոր համայնքի Վարդանանց 16 հասցեում ավտոհավաքակայանի վերակառուցում գրասենյակային տարածքների նախնական էսքիզային նախագիծը: Երկկողմանի քննարկվեցին նախագծին վերաբերող հարցեր:

Հանրային քննարկումն ավարտվեց ժամը 15:00-ին:

Հանրային քննարկմանը մասնակցում էին՝

Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետի պարտականություններ կատարող Արմեն Ալավերդյանը, Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի հանրային կապերի, լրատվության բաժնի աշխատակիցներ, նախագծի ճարտարապետ Արտակ Գաբրիելյանը:

Նիստը վարող՝
Վանաձորի համայնքապետարանի
աշխատակազմի ճարտարապետության և
քաղաքաշինության բաժնի պետի պ/կ _____ Ա.Ալավերդյան

Նախաձեռնող՝
«Օկտոպուս Գրուպ» ՍՊԸ տնօրեն _____ Գ.Մխիթարյան